ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «06» 12 2017թ № 1204-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման N 3 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 5-ի N 249-Ն հրամանի N 1 հավելվածի 4-րդ կետը՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2018 թվականի հունվարի 17-ին ժամը 11.00-ին հայտարարել բաց մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Անի Բարխուդարյանին՝ սահմանված կարգով իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության « Չափագիտության ազգային ինստիտուտ » փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է բաց մրցույթ ընկերության գործադիր մարմնի ընտրության

«Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն:

Մրցույթը կանցկացվի 17.01.2018թ. ժամը 11.00-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շենքում, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն.
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).
- պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն,
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Դիմող քաղաքացիները ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- գունավոր լուսանկար,
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
- բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

<u>Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00} -ից մինչև 12^{00}- ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:</u>
<u>Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15.01.2018թ.:</u>

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմ /ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, հեռ. 011-597-196, ներքին՝ 196/: